# Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 24 | Հունվար | 2019 թ. | Բ | 6331689428 |

| [4] Առաքման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 24 | Հունվար | 2019 թ. |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | |
| | |

| Պայմանագիր | |
|---|---|
| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| 18 Հունվար, 2018 թ. | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Արտադրանք, ապրանք առաքող անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 6 9 0 2 0 8 7 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [10] Անվանումը | «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) |
| [11] Բանկային տվյալները | "ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ; N 1570015001210100 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [14] Լրացուցիչ տվյալներ | |

## Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի

| | |
|---|---|
| [15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [18] Բանկային տվյալները | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն; N 900011000834 |
| [19] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [20] Լրացուցիչ տվյալներ | |
| [21] Ում միջոցով | Անուն, ազգանուն: |
| | Լիազորագիր — Համար: ; Ամսաթիվ: |
| [22] Մատակարարման (առաքման) եղանակը | |
| [23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Այդ թվում՝ բնապ. հարկ | Այդ թվում՝ ակցիզ. հարկի գումար |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 36164818բ/գ, | հատ | 2 | 39400 | | 78800 | | |
| Ընդամենը | | | | | | 78800 | | |

Առաքող՝ KALANTARYAN GAYANE 7203510093

(անունը, ազգանունը)

Ստացող

(անունը, ազգանունը)

24/01/2019 11:08:43

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

## *Դատահոգեբուժական ամբուլատոր փորձաքննություն նշանակելու մասին*

,,14,, դեկտեմբերրի 2018թ                                                  ք.Դիլիջան

ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ՝ Ս.Լ.Սաղաթելյանս, քննության առնելով 36164818 քրեական գործի նյութերը

## *Պ Ա Ր Զ Ե Ց Ի*

2018 թվականի նոյեմբերի 30-ին Ալիկ Գարնիկի Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով, այն բանի համար, որ նա 2018 թվականի սեպտեմբերի 30-ին՝ ժամը 20:00-ից մինչև 21:00-ն ընկած ժամանակահատվածում, Գրիգոր Գառնիկի Հարությունյանի գույքը գաղտնի հաշտակելու վերաբերյալ նախնական համաձայնության գալով Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոցի 76 շենքի 46 բնակարանի բնակիչ Արթուր Սամվելի Պապյանի հետ, օգտվելով Գրիգոր Հարությունյանի՝ Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոցի 98/1 հասցեում գտնվող տանը մարդ չլինելու հանգամանքից, հիշյալ տան եվրոպատուհանը բացելու եղանակով, Արթուր Պապյանի օժանդակությամբ՝ նրա օգնությամբ, ապօրինի մուտք է գործել ներս և մինչ Արթուր Պապյանը <<հսկել>> է տարածքը, Ալիկ Հարությունյանը տանից գողացել է ընդհանուր՝ 27.000 դրամ արժողությամբ երեք կիսաօգտագործված օծանելիքներ և մեկ հատ ապխտած երշիկ:

Առաջադրված մեղադրանքում Ալիկ Գարնիկի Հարությունյանը իրեն մեղավոր է ճանաչել և տվել խոստովանական ցուցմունք;

Քննությամբ պարզվել է, որ Մեղադրյալ Ալիկ Հարությունյանը 07.07.2014 թվականին զորակոչվել է ՀՀ ԶՈՒ և 10.03.2015թ-ին վաղաժամկետ զորացրվել է պահեստազոր ՀՀ ՊՆ 08.04.2013թ-ի 410 հրամանի <<5Բ>> հոդվածի 1-ին սյունակի

Համաձայն 23.02.2015թ-ի ՀՀ ՊՆ 88865 զ/մ ռազմաբժշկական հանձնաժողովի փորձաքննության հիվանդության վկայագրի.

ԱԽՏՈՐՈՇՈՒՄ--- (Անձի օրգանական խանգարում, փսիխոտիկ դեկոմպենսացիա), վիճակ՝ կրած ջրծաղիկից հետո :

Ալիկ Հարությունյանը Դիլիջանի բժշկական կենտրոնի հոգեբուժական հաշվառումներով չի անցնում:

Նկատի ունենալով, որ անհրաժեշտ է պարզել Ալիկ Հարությունյանը հոգեկան վիճակը՝ հանցագործությունը կատարելու պահին, արդյոք նա տառապել և տառապում է հոգեկան հիվանդությամբ, իր գործողությունների բնույթը գիտակցել է, թե ոչ: Այս և այլ հարցեր պարզելու համար պահանջվում են դատահոգեբուժական բնագավառի հատուկ գիտելիքներ ինչպես նաև գործի համար կարևոր նշանակություն ունեցող այլ հարցերը պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառի հատուկ գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քր.դատ օր-ի 243-245-րդ 55-րդ և 248-րդ հոդվածների պահանջներով.

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. 36164818 քրեական գործով նշանակել դատահոգեբուժական ամբուլատոր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ <<Լոռու մարզային **հոգենյարդաբանական դիսպանսեր>> ՊՓԲ ընկերության փորձագետներին.**

2. Փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը

Մեղադրյալ Ալիկի Հարությունյանը որևէ քրոնիկ հոգեկան հիվանդությամբ, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտությամբ կամ հոգեկան այլ այլ հիվանդագին վիճակով արդյոք տառապել է և ներկայումս տառապում է, թե ոչ:

ա/ Մեղադրյալ Ալիկ Հարությունյանը հանցագործությունները կատարելու պահին տառապել է հոգեկան հիվանդությամբ կամ գտնվել է ժամանակավոր հոգեկան խանգարման մեջ, թե ոչ, եթե այո, ապա հիվանդությունը կամ վիճակը զրկել է արդյոք նրան իր գործողությունների բնույթը գիտակցելու, այդ գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից, թե ոչ:

բ/ Մեղադրյալ Ալիկ Հարությունյանը հանցագործությունը կատարելու պահին գտնվել է արդյոք անմեղսունակ կամ սահմանափակ մեղսունակության վիճակում, թե ոչ, ներկայումս մեղսունակ կամ սահմանափակ մեղսունակ է, թե ոչ, հարկադիր բուժման կարիք ունի. թե ոչ:

գ/ Մեղադրյալ Ալիկ Հարությունյանը վտանգավոր է արդյոք հասարակության համար. թե ոչ, նրան հոգեկան վիճակը խոչընդոտում է նրան մասնակցությանը քրեական գործի վարույթին /նախաքննությանը և դատաքննությանը/:

Քրեական գործի նյութերը կտրամադրվի փորձաքննության ընթացքում:

Փորձագետին խնդրել պատասխանել նաև այլ հարցերի, որոնք թեև որոշման մեջ նշված չեն, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն հոգեբույժ փորձագետների իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

Միաժամանակ պարզաբանել փորձագետներին, ում հանձնարարված է փորձաքննության կատարումը ՀՀ քր.դատ.օր.-ի 85-րդ հոդվածով նախատեսված իրենց իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, եզրակացություն տալուց հրաժարվելու կամ խուսափելու համար ՀՀ քր.օր.-ի 338-րդ հոդվածներով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

Հատկապես կարևոր գործերով քննիչ     Ս.Լ.Սաղաթելյան

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

***Դատահոգեբուժական ամբուլատոր փորձաքննություն նշանակելու մասին***

,,14,, դեկտեմբերի 2018թ                                                                                    ք.Դիլիջան

ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ՝ Ս.Լ.Սաղաթելյանս, քննության առնելով 36164818 քրեական գործի նյութերը

# Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018 թվականի նոյեմբերի 30-ին Արթուր Սամվելի Պապյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով, այն բանի համար, որ նա 2018 թվականի սեպտեմբերի 30-ին՝ ժամը 20:00-ից մինչև 21:00-ն ընկած ժամանակահատվածում, Գրիգոր Գառնիկի Հարությունյանի գույքը գաղտնի հափշտակելու վերաբերյալ նախնական համաձայնության գալով Տավուշի մարզի Հաղարծին գյուղի 2-րդ փողոցի 1-ին նրբանցքի 24 տան բնակիչ Ալիկ Գառնիկի Հարությունյանի հետ, օգտվելով Գրիգոր Հարությունյանի՝ Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոցի 98/1 հասցեում գտնվող տանը մարդ չլինելու հանգամանքից, Ալիկ Հարությունյանի կողմից հիշյալ տան եվրոպատուհանը բացելու եղանակով, Ալիկ Հարությունյանն իր օժանդակությամբ՝ օգնությամբ, ապօրինի մուտք է գործել ներս և մինչ ինքը <<հսկել>> է տարածքը. Ալիկ Հարությունյանը տանից գողացել է ընդհանուր՝ 27.000 դրամ արժողությամբ երեք կիսաօգտագործված օծանելիքներ և մեկ հատ ապղտած երշիկ:

Առաջադրված մեղադրանքում Արթուր Պապյանը իրեն մեղավոր չի ճանաչել և հրաժարվել ցուցմունք տալուց:

Քննության ընթացքում մեղադրյալ Ա.Պապյանը ունեցել է հոգեկան շեղվածության դրսևորումներ, ինչը կասկած է հարուցում նրա ընդհանուր առողջական վիճակի վերաբերյալ, մասնավորապես՝ հոգեկան առողջության:

Արթուր Պապյանը Դիլիջանի բժշկական կենտրոնի հոգեբուժական հաշվառումներով չի անցնում:

Նկատի ունենալով, որ անհրաժեշտ է պարզել Արթուր Պապյանը հոգեկան վիճակը՝ հանցագործությունը կատարելու պահին, արդյոք նա տառապել և տառապում է հոգեկան հիվանդությամբ, իր գործողությունների բնույթը գիտակցել է, թե ոչ: Այս և այլ հարցեր պարզելու համար պահանջվում են դատահոգեբուժական բնագավառի հատուկ գիտելիքներ ինչպես նաև գործի համար կարևոր նշանակություն ունեցող այլ հարցերը պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառի հատուկ գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քր.դատ օր-ի 243-245-րդ 55-րդ և 248-րդ հոդվածների պահանջներով.

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. 36164818 քրեական գործով նշանակել դատահոգեբուժական ամբուլատոր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ **<<Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր>> ՊՓԲ ընկերության փորձագետներին,**

2. Փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը

Մեղադրյալ Արթուր Պապյանը որևէ քրոնիկ հոգեկան հիվանդությամբ, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտությամբ կամ հոգեկան այլ այլ հիվանդագին վիճակով արդյոք տառապել է և ներկայումս տառապում է, թե ոչ:

ա/ Մեղադրյալ Արթուր Պապյանը հանցագործությունները կատարելու պահին տառապել է հոգեկան հիվանդությամբ կամ գտնվել է ժամանակավոր հոգեկան խանգարման մեջ, թե ոչ, եթե այո, ապա հիվանդությունը կամ վիճակը զրկել է արդյոք նրան իր գործողությունների բնույթը գիտակցելու, այդ գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից, թե ոչ:

բ/ Մեղադրյալ Արթուր Պապյանը հանցագործությունը կատարելու պահին գտնվել է արդյոք անմեղսունակ կամ սահմանափակ մեղսունակության վիճակում, թե ոչ, ներկայումս մեղսունակ կամ սահմանափակ մեղսունակ է, թե ոչ, հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ:

գ/ Մեղադրյալ Արթուր Պապյանը վտանգավոր է արդյոք հասարակության համար, թե ոչ, նրան հոգեկան վիճակը խոչընդոտում է նրան մասնակցությանը քրեական գործի վարույթին /նախաքննությանը և դատաքննությանը/:

Քրեական գործի նյութերը կտրամադրվի փորձաքննության ընթացքում:

Փորձագետին խնդրել պատասխանել նաև այլ հարցերի, որոնք թեև որոշման մեջ նշված չեն, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն հոգեբույժ փորձագետների իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

Միաժամանակ պարզաբանել փորձագետներին, ում հանձնարարված է փորձաքննության կատարումը ՀՀ քր.դատ.օր.-ի 85-րդ հոդվածով նախատեսված իրենց իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, եզրակացություն տալուց հրաժարվելու կամ խուսափելու համար ՀՀ քր.օր.-ի 338-րդ հոդվածներով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

Հատկապես կարևոր գործերով քննիչ՝ Ս.Լ.Սաղաթելյան